

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՅՄԱՆԻՑ

ՊԱՐԻՋ, 26 հոկտեմբերի, (Պարիզի կօնգրես կիրականօրեալ հանգստութեան առիթով)։ Այս շաբաթ կապացաւ Պարիզում նաեմի կօնգրես՝ կիրականօրեալ հանգստութեան խնդրի մասին խորհուրդ տեսնելու համար։ Գորա նախագահն էր Լէօն Սէ, ֆինանսական և քաղաքական լատնի գործիչը Ֆրանսիայում, հռչակաւոր «Ժուրնալ դէ Դեբա»-ի գլխաւոր խմբագիրը։ Բացման նիստում կարգացնցին նամակներ, ստացած Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Հերիտօնից և պ. Գլադստօնից։ Այդ երկուսն էլ խօսում էին լոգոստ կիրականօրեալ հանգստութեան՝ կրօնական թէ ոչ կրօնական դիտումով։ Մի բծիչէ և ֆիլոսօֆալութեան մի պրօֆեսօր կարգացին զեկոցումներ խնդիրը լուսաբանելու համար, որից լետոյ մի գործարանատէր հարց դրեց, թէ արդեօք կիրականօրեալ հանգստութիւնը ո՞ր չափով գործնական է, մանաւանդ այն մեծ բանւորական կենդրոններում, ուր անընդհատ աշխատութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ մեքենայի շարժողութեան ամեն մի ընդհատման հետ կապած են նշանաւոր ծախքեր։ Այդ հարցին պատասխանեց պ. Պալէի, Բրիտանի գործարանատէրից մէկը։ Սա կարծիք չափեց, թէ կիրականօրեալ հանգստութիւնը կարելի է առանց քնասի գործադրել բոլոր գործարաններում։ Բայց կալին խօսողներ, որոնք ալ կարծիք ոչ բոլորովին ընդունում էին։ Կօնգրեսը, որը կարծեց, թէ իւր կարծիքը չը պէտք է բոլորովին բացարձակ կերպով արտապատէ, ի վերջոյ եկաւ հետեալ վճիռներին։

- 1) Կիրականօրեալ հանգստութիւնը, զանազան աստիճաններով, կարելի է բոլոր գործարաններում։ Կիրակին այն օրն է, որը ամենից լարմաբն է թէ գործատիրոջ և թէ բանւորի համար, թէ անհատական և թէ ընտանեկան կեանքի տեսակէտից։ Լաւ է, որ հանգստութեան օրը ամենքի համար նոյնը լինի։
- 2) Եթէ կարեւորագոյն թէ տեխնիկական կամ այլ հիմունքներով՝ կիրականօրեալ հանգստութիւնը անկարելի դատուի, այն ժամանակ պէտք է ալ օրեալ տեղը նշանակւի մի ալ օր, այնպէս որ բանւորը ազատ ունենայ 52 օր, կարելիին չափ հաւասարապէս բաժանած տարւալ ընթացքում։ Այդ հանգստութիւնը կարելիութիւն է տալիս մարդուս՝ թէ աւելի շատ և

թէ անւի լաւ կատարել գործը, նորա ֆիզիքական ուժը կազդուրելով: Բացի դորանից, կօնպրեսը խորհուրդ տւեց բանւորների վարձը բաժանել ոչ թէ շաբաթ կամ կիրակի օրերը, այլ մի ալ օր, օրինակ՝ ուրբաթ օրերը:

ԲԵՐԼԻՆ, 26 հոկտ. (Էլեքտրական գործը Գերմանիայում), Էլեքտրո-տեխնիկական Ընկերութիւնը, ամառաւ արձակուրդներից լետու, ամսիս 22-ին վերականգնեց իւր ընդհատւած նիւտերը: Ընկերութեան պատուաւոր նախագահ, պետական քարտուղար դ-ր Փօն Ստեֆան ողջունեց բազմաթիւ ներկայ եղող անդամներին և, հին սովորութեան հետեւելով, ակնարկ գցեց անցած տարւոյ վերաջ, որից մեք հետեւաւ քաղեցինք:—Միւնխենից դրուած խնդրի համար՝ 100 տարի մեղնից առաջ Էլեւնդէնում ծնւած ֆիզիկոս Գէորգ Օհմ'ին (Ohm) արձան կանգնեցնելու, որը Էլեքտրական հասանքի օրէնքների զբոնողն է՝ Էլեքտրո-տեխնիկական Ընկերութիւնը հաւաքել է 2131 մարկ, որ և լանձնւած է արձան կանգնեցնելու մասնաժողովին:

Նրկրի միջին կատարուող հասանքների էութեան մասին հետազոտութիւնները շարունակւցին, որպէս նաև կալծակի վտանգների վերաբերութեամբ: Վերջինիս վերաբերեալ մի մասնաժողով լանձն էր առել գաղի և ջրի գործերի ներկայացուցիչներին համոզել, որ շանթարգելները միացնելն գաղի և ջրի խողովակների հետ:

Հեռագրական ասպարիդի վերաջ Գերմանիայում նոր քալեր արւեցին, որ առանձին նպատակների համար և որտեղ պահանջը ամենամեծն է, ինքնաշարժ արագագիր ապարատներ (գործիքներ) ներմուծւեն:

Այժմ Գերմանիայի հեռագրական թելերի ցանցը ունի 80.537 կիլօմետր (գրեթէ նոյնքան վերստ) գլծ՝ 284.945 կիլօմետր թելերով և 15.631 կալարաններով:

Հեռախօսական գործը հսկայական քալեր է արել: Գերմանիան ունի 200 քաղաքներ ընդհանուր հեռախօսական հաստատութիւններով, որոնք միասին 39.000 արօնենտներ ունին: Հեռախօսական թելերը ներկայացնում են 62.610 կիլօմետր երկարութիւն: 79 հեռախօսական կալարաններ կան, որոնք հարևան քաղաքները իրար հետ միացնում են. ալժըմ չինւում են դարձեալ 15 ալպիսի կալարաններ: Միմիաջն Բերլինը ունի 11.200 արօնենտներ, Համբուրգը՝ 4.900:

Էլեքտրական լուսաւորութիւնը նմանապէս ընդհանուր ծաւալումն է ստանում. այդ վկայում են նորակառուց կենդրոնական կալարանները՝ Էլքերֆելդ, Դարմշտադտ, Միւլհաուզէն (Էլզասում), Լիւբէկ, Նիւրնբերգ և ալ քաղաքներում: Շուտով բացւելու է Բերլինում երրորդ կենդրոնական կալարանը, իսկ չորրորդը արդէն չինւում է:

Յիշատակելու է նաև ձեռնարկութիւնը՝ Հոհնոս և Նեկար գետերի ջրալին ուժը Էլեքտրական նպատակների գործ դնելու համար:

Վերջապէս, էլեքտրականութեան էութիւնը հասկանալու համար, վերին աստիճանի հետաքրքրական փորձեր արեց պրոֆեսոր Դ-ր Հերց (Hertz) Բօննի համալսարանում: Այդ փորձերով ապացուցուած է, որ կապ կալուսալին (օպտիկական) և էլեքտրական երևոյթների մէջ, որովհետեւ լուսալին եթերը, որի շարժումով լուսի ծագումն է բացատրուած, նաեւ էլեքտրական հոսանքների միջնորդ է հանդիսանում, համաձայն ակեքանման շարժման օրէնքների:

Այս ակնարկից չեսող՝ անցեալ տարւալ գործունէութեան վերալ տեղի ունեցաւ պրոֆեսոր Բեւլից պարոն Տենտերի հետ միասին հնարած ձայնագիր գործիքի ցոյց տալը անգլիական «Գրաձայն Բնկերութեան» (Graphophon Company) ներկալացուցիչների կողմից: Գործիքը, որը, որպէս նաեւ Էդիսոնի ֆօնօգրաֆը, ծառալում է խօսքերի հնչիւնները և առհասարակ ձայները պահպանելու և վերարտադրելու, արտաքին ձեռով նման է կարէմքենալի: Ձայների վերարտադրելը կատարեց նոյն ձեռով և նոյնպէս որոշակի, որքան և ֆօնօգրաֆով: Գրաձայնի (գրաֆօֆօնի) առաւելութիւնը Էդիսոնի ֆօնօգրաֆից կալանում է նորանում, որ առաջինը աւելի լարմար է գործածուած, որովհետեւ նա չի պահանջում էլեքտրական ուժ:

Գորանից չեսող խօսեց պ. Ալեքսանդր Բերնշտայն, Համբուրգից, «էլեքտրական էներգիալի բաշխման մասին մշտական հոսանքի մէջ» (Ueber die Vertheilung elektrischer Energie durch constanten Strom): Դասախօսութեան առարկան կարեոր նշանակութիւն ունի էլեքտրական լուսաւորութեան գործի համար:

ՊԱՐԻՉ, 23 հոկտեմբ.: (Ֆրանսիական մամուլը): Որպէս չար լեզուները պնդում են, թէ հանրապետութեան ամենակատաղի թշնամիները իրանք հանրապետականներն են, նոյնպէս և, Ժիւլ Սիմօնի կարծիքով, լրագրական գործի ամենավատ թշնամիները լրագրական դրողներն են: Ժիւլ Սիմօնը իւր չօղածը տպել է «Matin» լրագրում և ահա թէ ինչ է ասում. «Վերջին ընտրութիւնների արշաւանքից չեսող կարելի է ասել, որ Ֆրանսիական մամուլը, մի քանի գովելի բացառութիւնից դուրս, վատ գրութեան մէջ է»: Հռչակաւոր ակադեմիկոսը խորհուրդ է տալիս մամուլին, որ իւր պակասութիւնները ինքը ուղղէ, որպէս ղի նորանով չը զբաղէ պարլամենտը, որը ոչ մի դէպքում իւր օգտին չի լինի: Մամուլի դէմ երեք տեսակ միջոցներ կան, ասում է Ժիւլ Սիմօնը. 1) կառավարչական հսկողութիւն և ցենզուր. 2) իրաւական՝ բացառիկ դատարաններ. 3) ֆիսկալական՝ դրաւական և լրագրական դրոշմը:

Բնատարացիալի ժամանակ, 1819-ին դեռ ևս քիչ լրագիրներ կալին. համարներ ծախելը անծանօթ էր, բաժանորդադիւնը 80 ֆրանկ արժէր:

Էմիլ դը Ժիրարդէնը առաջինն էր, որ լրագրութիւնը աժանացրեց: Ընդհանուր ձայնատուութեան իրաւունքի ներմուծումը առաջացրեց մեծագոյն պահանջ՝ քաղաքական հանդամանքների մասին տեղեկանալ: Այդ ժամանակից դէպք համարով ծախելը մի սու՛ով (2 կոպէկ) սկսեց երևան գալ: Նապոլէօն III-ը համոզւած էր մամուլի ուժի մասին, և այդ պատճառով նա ուզեց ոչ թէ նորան ճնշել, այլ նորա վերաջ իշխել: Այժմ կան մի սու՛անոց լաւ թերթեր, բայց կան և զգւելիները: Սոքա կարող են աւելի մեծ ֆեասներ հասցնել, քան երեք սու՛անոցները, որովհետև առաջինների ընթերցողները և՛ աւելի բազմաթիւ են և՛ աւելի անզարգացած: «Journal des Debats»-ի ընթերցողը գիտէ դատել իւր թերթը, մինչդեռ «Petit journal»-ի ընթերցողը ենթարկւած է նորա ազդեցութեան: Մի սու՛անոց վատ թերթերը աւելի բազմաթիւ են, քան լաւերը և այն էլ այնքան վատ են, որքան միայն կարելի է: Դոքա իրանց ձեռով են հասկանում մամուլի երեք տեսակ կոչումը. 1) լուրեր տալ. բայց ամեն մի լուր նրանց համար լաւ է, որը հակառակորդին ֆեաստւում է. 2) խորհուրդ տալ. բայց նոցա սկըզբունքները կապնում են միայն զրպարտութիւնների մէջ և ամենալաւ խորհուրդը թւում է նրանց այն, որը անիշխանութեան է տաւում. 3) դատողութիւն տալ. բայց նոքա ամեն բանի մէջ միայն ամենավատ կողմն են տեսնում, չափազանցնում են և հնարում, նախ՛ հարկաւորութեան, Նոքա ուղում են կառավարութիւնը գետին տապալել. եթէ այդ նրանց չաջողէր, նոր կառավարութեան դէմ էլ կը լինէին և նորա թշնամիները: Նոյն եռանդով նոքա չարձակում են և կապիտալի վերաջ և քաղաքացու վերաջ և ընտանիքի վերաջ և կրօնի վերաջ և ամեն ազնիւ ու մեծ բանի վերաջ: Նոցա միակ նպատակն է՝ բաժանորդները շատացնել. դորա համար նոքա դրդում են ստորին ժողովրդի մէջ սորա ամենաաղնիւ կրքերը և փշացնում նորան, և նորա խեղճութիւնը աւելի էլ զգալ տալիս իրան:

Մամուլի մի մեծ պակասութիւնը, ըստ Ժիւլ Սիմօնի, նորա ձգտումն է՝ լուրեր հաղորդելու մէջ առաջինը լինել: Մի լուրի անժամանակեայ հրատարակութիւնը կարող է երբեմն քաղաքական մեծ ֆեասներ հասցնել, մինչդեռ շատերը միջոց չեն խնայում լուրեր հաւաքելու:

Ի վերջոյ Ժիւլ Սիմօնը դիմում է մամուլի իւր ընկերակիցներին. «Մենք ունինք, ասում է նա, շատ սրամտութիւն (esprit), բայց քիչ խոհմութիւն.—մենք պէտք է լարենք մեր ուժերը, որ մեր տխմարութիւնների հետքերը ջնջենք և կրկին ձեռք բերենք այն հողը, որ մենք կորցրել ենք»:

ՊԱՐԻՋ, 27 հուլ. (Էմիլ 0 Ժիւլի մահը): Էմիլ 0 Ժիւլի մահը, որը ամեն հանդամանքներում մեծ ցաւակցութիւն դարձեցրած կը լինէր, այժմ հրե քա-

դաքական լուրերի սակաւութիւն է, տեղական մամուլի համար մեծ խօսակցութեան առարկայ է: Սիւնեակ սիւնեակներ լիւրաւ տպում են լրագրիւնները վիշողութիւններ և ակնարկներ Օթիէ'ի դրամական գործունէութեան անցեալի վերաբերեալ: «Գօլլու» (Gaullois) լրագիրը ղիմել է նշանաւոր անձնաւորութիւններին, խնդրելով գրաւոր լալտնել իրանց կարծիքը հանգուցեալի մասին, և ալժամ հրատարակում է ստացած պատասխանները՝ Ֆրանսիական Ակադէմիայի մշտական քարտուղար ակադեմիկոս Կամիլլ Դոուէ'ի, վիպասան Վիկտոր Շերբուլէ'ի, պուբլիցիստ, վիպասան և «Ֆրանսիական Կոմիդիայի» ալժմեան կառավարիչ Ժիւլ Կլարրտի'ի, պատմաբան և աղագիր լուսաւորութեան նախկին մինիստր Վիկտոր Դիւրլի'ի, Օկտաւ Ֆօլէ'ի, Էրնեստ Բընան'ի, Սարա Բուռնար'ի, վիպասան Ալֆօնս Դոդէ'ի, անգլիական դեսպան լորդ Լիտտօն'ի (որ իբր գրող ստորագրում է Օւեն Միտլիթ), Էմիլ Զօլայի, Թէօֆիլ Գօթիէ'ի (որդու նոյն անուն բանաստեղծի):

Բովանդակութիւնով ամենից հետաքրքրականն է Էմիլ Զօլայի պատասխանը, որ և ահա. «Ֆրանսիական բեմի ալժմեան վարպետների մէջ Էմիլ Օթիէ'ն նա է, որը ամենալարատու և ամենից լամառ կերպով իւր նպատակին էր գիմում: Յիշեցէ՛ք միալն բոմանտիկոսների՝ Վարձակումները: Սոքա անուանում էին նորան «առողջ դատողութեան» (ուրեմն՝ իբր թէ՛ զգացմունքից զուրկ) բանաստեղծ: Նոքա ծաղրում էին Օթիէ'ի ոտանաւորները, որովհետև չէին կարող Մոլիեր'ի ոտանաւորները ծաղրել: Բայց խակալէս Օթիէ'ն խանգարում էր բոմանտիկոսներին. որովհետև նոքա տեսան նորա մէջ վտանգաւոր թշնամի, մի բեմական գրող, որը 1830 թականի դրօշակի գլխովը անցաւ և Ֆրանսիական աւանդութեանը կրկին կպաւ: Նոր ֆօրմուլը մեծացաւ նորա հետ՝ ճիշդ դիտողութիւնը, խակական կեանքի տեղափոխումը բեմի վերայ, հաւատարիմ նկարագրութիւնը մեր հասարակութեան պարզ և ճշգրիտ լեզուով: Իմ կարծիքը միշտ եղել է՝ որ մեր պապալ բեմը լինելու է՝ կլասիկական ֆօրմուլների գործադրութիւնը մեր հասարակական կեանքի չրջանակի մէջ»:

Դիակը երէկ զմուսեց և տարւեց բանաստեղծի բնակարանը, փողոց Կլիշի: Հոգեհանգստից լետու կը կատարւի թաղումը մի գիւղական հանգըստարանում, ալն է՝ Լա Սէլլ Սէն-Կլու գիւղում:

ՊԱՐԻՋ, 15 հոկտեմբ. (Յւրոպայի Գրադարաններ): «Աղագիրի Գրադարանի» գլխաւոր կառավարիչը հրատարակեց մի ղեկու-

1) Բօմանտիկոսներ կոչւեցին գրականութեան այն ուղղութեան հետեւողները, որը գարուս քսանական թականներէն սկսած Ֆրանսիայում յաղթող Հանդիսացաւ կեղծ կլասիկականութեան վերայ: Ամենահաջակաւոր բոմանտիկոսը և պարագլուխը այդ գողոցի Վիկտոր Հիւգօն էր, 1830 թականից սկսած:

ցում, որի համաձայն այդ հիմնարկութիւնը ունի արժամ 2.078.000 հատոր գիրք, մինչդեռ «British Museum» նմանապէս հռչակաւոր անգլիական գրադարանը հազիւ 1 միլլիոն հատոր ունի: Միւնխենի գրադարանը ունի մօտ 800.000, Բեռլինին՝ 700.000, Դրեզդենին՝ 500.000 և Վիեննային՝ 300.000 հատոր գիրք: Վատիկանի գրադարանում կան միայն 30.000 հատոր գիրք, բայց և 25.000 շատ կարեւոր ձեռագիրներ:

ՋԻԻՅԵՐԻԱ, 13 հոկտեմբերի: (Գրականական կեդծիք): Մի լուր հաղորդեմ ձեզ, որը, անշուշտ, հետաքրքրական պիտի լինի բոլոր գրասէրներին: Արառու քաղաքում հրատարակւում է «Fernschau» անունով մի «Ամսագիր միջին-դէպերիական-աշխարհագրական առևտրական ընկերութեան Աարառում»: Այդ ամսագրի մէջ տպւում էր դր Էմիլ Հասլէր'ի մի ճանապարհորդութիւնը, որի մասին ամսագիրը կարծիք չպտնեց, թէ այդ գործը նաև դիտնական կողմից շատ նշանաւոր է: Դորա դէմ դուրս եկաւ դ-ր Կարլ Ֆոն դէն Շտալնէն պնդումով, թէ այն աշխատութիւնը միմիայն երևակայութեան գործ է և թէ դ-ր Հասլէր'ը երբէք ալ ճանապարհորդութիւնը արած չէ, որ այնքան մանրամասնաբար նա նկարագրում է: Ընկերութեան վարչութիւնը պատասխանեց խոստովանելով, որ Ֆոն դէն Շտալնէն կրկին պատասխանեց, որով ընթերցողների մեծագոյն մասին համոզեց, որ իւր մեղադրանքը, աւանդ միանգամայն հիմնովին է եղած: Բայց ընկերութեան վարչութիւնը դեռ ևս համոզած չէր և կարծում էր, թէ Հասլէր'ը կը պաշտպանի իրան: Այդ հանգամանքը, որպէս նաև մի քանի ուրիշ տհաճ դէպքեր, ուշադրին աշխատութեան երրորդ հատորի լոյս տեսնելը, որը գրեթէ ամբողջապէս տպւած պատրաստ էր: Մինչ այս, մինչ այն, վարչութիւնը փոխեց: Ինչ վերաբերում է Հասլէր'ի գործին, բանից դուրս եկաւ, որ, իրաւ, նորա ճանապարհորդական ղեկուցումը գրականութեան մէջ դեռ ևս չը լւաւ մի կեղծիք է:

ՆԻԻ-ԵՕՐԿ, 25 սեպտեմբ.: (Համա-Ամերիկական կօնդրեսը): Համա-Ամերիկական կօնդրեսի պատգամաւորները ան արդէն գրեթէ ամենքը եկել, հասել են Միացեալ Նահանգները: Նոքա ընդունւեցին Նիւ-Եօրկինս-ա-Նահանգատում դորա համար կազմւած մի չափով մասնաժողովից: Հոկտեմբ. 2-ին կը դուրսուի այդ կօնդրեսը՝ չափով դորա համար վարձւած մի շինութեան մէջ, լիտոց in corpore կը ներկայացնէի նախագահին, որից լիտոց, պաշտօնական ուղեկցութեամբ կը սկսեն եօթ շաբաթաւ մի ճանապարհորդութիւն Միացեալ Նահանգների մէջ: Օտար հիւրերին ուղում են ոչ միայն զարմացնել երկրի վիթխարի բնութեան հրաշալիքներով, որպէս Նիագարայի ջրվեժը, Մամութի քարալը կենտուկիում, Ինլուտոնի

Աղգալին-պարկը (ալգի) և իօսեմիտ վալլէլ կալիֆօրնիայում, ալ և աչքի անց-կացնել Միացեալ Նահանգներէ մեծ արդիւնադործութիւնները և հարստութեան մեծ աղբիւրները: Նոքա պիտի տեսնեն Ալլեգանի վիթխարի քարածուխի և երկաթի հանքերը, Պիտտսբուրգի հալելու գործարանները և Պենսիլվանիայի նաւթահորերը: Նոքա պիտի հիանան երկրալէն գաղի աղբիւրներէ վերայ Օհիօում, Պուլմանի վաղօններէ գործարանի և հսկապական սպանդանոցներէ վերայ Չիկագօում և հարիւրաւոր ցորենի էլ և ատօրներէ վերայ հիւսիս-արեւմտեան երկաթուղիներէ մօտ: Նոքա կը վայելեն ամերիկական դարեջուրը Միլատուկէէրի հսկապական դարեջուրգործարաններում, և Մին-նէսպօլ քաղաքում մի գաղափար կը ստանան ամերիկական ցորեն-աղաց ինդուստրիալի մասին: Նոքա կ'ալցելեն Դակօտա'լի ցորենի հսկապական ազարակներէ ահալին շինութիւնները, իսկ ճանապարհորդութեան ժամանակ Ամերիկայի միջով կը ծանօթանան ամենամեծ պահանջներէն բաւականութիւն տուող ամերիկական երկաթուղիներէ հետ: Նոքա կ'ալցելեն կալիֆօրնիան, Ամերիկայի ալգ ալգին, Կոլօրադօի ոսկու և արծաթի հանքերը, իսկ քնուկ նաև Արեւելեան Նահանգներէ մեծամեծ գործարանները: Ագալիսով նոքա, երկրի մեծաքանակ հրաշալիքներէ ահագնութեան ճնշող տպաւորութեան ներքոյ, կը սկսեն կօնգրեսի իսկական աշխատանքները:

Միացեալ Նահանգները կամենում են զարմացնել իրանց հիւրերին և կը հասնեն էլ ալգ նպատակին, որովհետև ինչ նոքա տեսնելու են, իսկապէս մեծ են և տեսնելու արժանի:

Պատգամաւորներէ բաղդից, սոքա մեծ մասամբ աշխարհք տեսած մարդիկ են, որովհետև իրանց երկրի դիւանագիտական ծառայութեան մէջ առիթ են ունեցած ուրիշ երկիրներէ և հանգամանքներէ հետ ծանօթանալու:

Ամերիկայի բոլոր տէրութիւնները, բացի Հաիտի'ից և Սանտօ-Դոմինգօ'ից, ուղարկել են պատգամաւորներ և միայն Արգենտինեան հանրապետութեան պատգամաւորները դեռ ևս եկած-հասած չեն: Պատգամաւորները հետեւեալ երկիրներէն են՝ Արգենտինեան հանրապետութիւնից, Բօլիւիա'ից, Բրազիլիա'ից, Գաաթեմալա'ից, Կոլումբիա'ի միացեալ Նահանգներից, Էկւատոր'ից, Կոստա Րիկա'ից, Հօնդուրաս'ից, Մեկսիկա'ից, Նիկարագուա'ից, Չիլի'ից, Պերու'ից, Սան Սալուադոր'ից, Վենեսուելա'ից:

ՊԱՐԻՋ, 27 հոկտեմբերի: (Շիտակութիւնը Ֆրանսիայի մինիստրներէ): Դուք լաւ գիտէք, թէ մամուլը ինչ ազատութիւն է վայելում Ֆրանսիայում: Լաւ գիտէք նաև, թէ ալգ ազատութիւնից փուշ թերթերը ինչ օգուտներ են քաղում: Գիտէք նաև, որ մի թերթին ոչինչ չէ նստում, երբ վալրահաչ կերպով բարձակում է ալս կամ ալն մինիստրի դէմ: Միջոցներից մէկը մի մինիստրի անպատեւելու, նորա շիտակութեան վերայ կասկած գցելն է, իբր թէ նա փող է կերել. չէ՛ թէ մի մինիստրի ձեռքի տակ շատ միլիօններ են պտտում:

Մի աղղպիսի փորձ արեց ներկայ կառավարութեան անդամ՝ Ֆինանսների մինիստր Բուլիէ'ի հետ: Յայտնի է, թէ այդ մարդը որքան բարձրացաւ, երբ քանի տարի առաջ ընդունեց մինիստրների նախագահի, միանգամայն և Ֆինանսների մինիստրի պաշտօնները: Այժմ էլ նա այս վերջին պաշտօնը ունի Տիրար'ի մինիստրութեան մէջ: Արդ, նորա վերադառնալէ կասկած զցել, իբր, մինիստրութեան պաշտօնում նա հարստացել է: Բուլիէ'ն բռնեց պաշտպանողական դիրք և արեւմտեան փալլուն կերպով ապացուցեց նորա վերադառնալէ արած մեղադրանքների զրպարտող բնատրութիւնը, որ նա աւելի ևս մեծ անուշով դուրս եկաւ այդ արշաւանքից:

Մի աղղպիսի արդարադատութիւն եղաւ այժմ, ի հարկէ շատ և շատ ուշ, Նոր-Պարիզի շինողի նկատմամբ: Դա է բարօն Հառուման, որը, Նապոլէօն III-ի ժամանակ, Պարիզի նահանգապետն էր և որին պարտական է Պարիզը իւր ալժմեան շքեղ բուլւարներով: Դորա համար նա գործածեց հինգ միլլիարդ, ասել է թէ՛ հինգ հազար միլլիօն Ֆրանկ, ստեղծեց շատ միլլիօնատէրեր և ինքը, այժմ, իւր անսովոր մեծ հասակում, չ'ունի անգամ որ և է կարողութիւն: Բարօն Հառումանը կամ Ֆրանսերէն արտասանութեամբ՝ Հօսման, պատրաստուում է այժմ հրատարակել իւր վիշողութիւնները:—Նս, ասում է նա, գործդ երեցի 5 միլլիարդ, որից երկուսը Պարիզ քաղաքինը երեքը՝ տէրութեան գանձարանից՝ Պարիզը վերանորոգելու համար և ալժմ խորխտ կերպով թափ եմ տալիս իմ դատարկ գրպանները: Իմ մասին բամբասեցին, թէ ես 40 միլլիօն կարողութիւն գիզեցի: Ճշմարտութիւնը, սակայն, այն է, որ Սէնի (որի մալքաքաղաքն Պարիզը) պրեֆեկտի (նահանգապետի) պաշտօնում ես իմ սեպհական գրպանից էլ փող եմ վեր գրել և ինձ մնում է միայն իմ կնոջ կարողութիւնը: Նս, շարունակում է նա, ոչ մի խօսքի չեմ հաւատում այն բոլորից, ինչ ասում ու խօսում է հանրապետութեան մինիստրների և ծառայողների դէմ: Հարստութիւն դիզելու առիթ ունեցողները ոչ թէ նոքա են, որոնց ձեռքին է կառավարութիւնը, այլ նոցա չըջապատողներն են:—Բարօն Հառումանը վկայութիւններով ապացուցանելու է, թէ ինչի՞ վերաջնաց 5 միլլիարդը:

Ամենքին այժմ չայտնի է, որ Բուլիէն, երկու անգամ մինիստր, լիտոյ մինիստրների նախագահ, ելեմուտքի մասնաժողովի ղեկուցանող և նախագահ լինելուց լիտոյ՝ հազիւ տարեկան 5.000 Ֆրանկ տոկոս է ստանում իւր անձնական կարողութիւնից: Յայտնի է, որ Ֆլօքէն, իբրև պատգամաւորների ժողովի նախագահ և մինիստրների նախագահ, իւր կնոջ կարողութեան ամենամեծ մասը մսխեց: և որ ներկայ համաշխարհային հանդէսը հանրապետութեան նախագահ Վարնօ'ին կը սնանկացնէր, եթէ նա և կինը միլլիօններ չը լինէին բերած Նիկիտեան պալատը: Սպիւլէրը, որ այժմ արտաքին գործերի մինիստր է, ազգային լուսաւորութեան մինիստրի և այլ աղղեցիկ բարձր պաշտօններ վարելուց լիտոյ՝ չէր կարողացել այնքան

առաջանալ, որ թողնէր իւր երկտասարդական բնակարանը՝ 5-երորդ լար-կում «Այմիկական Օպերայի» ալժմ ալրւած շինութեան ետեւը:

ՊԱՐԻՋ, 7 Նոյեմբ.: (Համաշխարհաւոր հանդիսի վերջըն:) Երէկ վերջացաւ համաշխարհային հանդէսը. և այդ վերջը վեցամսեալ տօնի գեղեցիկ ընթացքին կատարելապէս արժանի էր: Մինչև անգամ արեգակի պարզ շողը Նորից երևեց մի քանի տխուր անձրևային օրերից չետոյ և մեծացրեց ուրախ տրամադրութիւնը հարկւր հաղարաւորների, որոնք մինչ վերջին րոպէն աչտեղ էին ուզում լինել: Շրջակայքի գիւղական բնակիչները վաղորդեան գնացքներով եկել, ալստեղ էին շտապել. մինչև անգամ զարճութեան առանձին գնացքները բերել էին հիւսիսից և հարաւից հաղարաւոր անձեր, իսկ պարիզցիների մասսան անցկացրեց օրը իսկապէս տեճդի մէջ. դորա հետեանքն էր, որ շատ խանութներ կէսօրին փակեցին և անթիւ ընտանիքներ շատացան միայն մի պատահական ճաշով, իրանց ծառաներից վալելլութիւնը չը խլելու համար: Եթէ հանդիսի վեցամսեալ ընթացքում կառքերի սակաւութեան վերաջ լաճախ դանդաղ կար, երէկ խօ կրկնակի և եռապատիկ աւելի մեծ էր այդ պակասութիւնը: Ոչ միայն գործի մէջ էին բոլոր օմնիբուսները, ձիաքանները, կառքերը, հացթուխները, լանջարավաճառների, տրանսպորտի ագենտութիւնների սալլերը ու կառքերը, մի խօսքով՝ բոլոր ինչ անիւ ունի, ալ դեռ հաղարաւոր մարդ ու կանալք ստիպած էին ռաուլ գնալ. Բոլոր ճաշարանները ճաշի ժամին բռնած էին. մթերավաճառները ոսկիներ էր, որ հաւաքում էին. բոլոր բացօդեալ նստարանների վերալ և շատ թէ քիչ լարմարաւոր բաց տեղերում վերջին անգամ բացօդեալ նախաճաշեցին: և այնքան էր մեծ թէ քաղաքացիների և թէ շրջականների եռանդը, որ նոյն ձևով երեկոյեան ճաշը վալելեցին: Մեծ պակասութիւն էր հացի և գինու՝ այդքան մեծ բաղմութիւն չէր սպասուում: Շատրւանների շուրջը գտնուող բոլոր աթոռները արդէն ժամը 4-ից բռնած մնացին մինչ երեկոյեան ժամը 10-ը, չը նալած Սէն գետից մօտեցող մշուշին և միշտ աւելի և աւելի աճող ցրտին. գոյնդգոյն շատրւանների վերջին անգամալ «Ներկայացման» ներկալ լինելը գրեթէ պատիւ էր համարւում:

Արդէն ժամը 3-ին, կէսօրից չետոյ, այնքան ճեղւածք էր ներս ու դուրսը, որ առաջ գնալը հազիւ կարելի էր լինում և հանրապետութեան նախագահը, որը Տրօկադեո'ի պալատից դէսը, իբր պարզ ճեմող, Ենալ կամուրջի վրայից Մարսեան դաշտն էր ուզում անցնել, կրկին չետ քաշեց: Խուռն բաղմութեան մէջ նա ճանաչեց և խնդութեան ձայներով սղջունեց:

Գիշերաւին տօնը, շնորհիւ լաւ եղանակին, այնքան չաջող անցաւ,

որպէս ոչ մէկը զորանից առաջ, Ամբողջ Պարիզի վերայ արեւմուտքից տարածւեց մի փալուռն շող և էլեքտրական ճառագայթները էլֆեկի աշտարակի ծալրից վեր ի վեր էին թռչում դէպի պարզ աստեղադարձ երկինքը:

Հանդիսի փակումը պէտք է լինէր գիշերուայ ժամը 11-ին: Թմբկահարները աւետեցին ժամը, բայց հարիւրաւոր հազարներ միայն կէս գիշերին կարողացան անցնել Աշխարհահանդիսի դաշտի 40 դարպասներից և ոտով հասնել կամ իրանց բնակարանները և կամ երկաթուղու կայարանները, ուր նրանց սպասում էին զւարճութեան գնացքները:

Այդ վերջին օրուայ լաճախողների թիւը հաշւում են 400,000:

«Գօլուա» (Gaullois) լրագիրը իւր ալսօրուայ համարի չորս սիւնեակները նւիրում է Աշխարհահանդիսի ստատիստիկին: Վերջինս հիմնւում է մի կողմից ոտակականութեան և միւս կողմից հանդիսի վարչութեան տեղեկութիւնների վերայ: Կարևորագոյն թւերը սոքա են, որ պէտք է հաղորդել «Մուրճ»-ի ընթերցողներին:

Հաշւում են, որ Աշխարհահանդիսի համար Պարիզ են եկած 5 միլիոն զաւառացիք: Եթէ ընդունենք, որ նոցանից ամեն մէկը միջին թւով 100 ֆրանկ (25 ոսկի րուբլ) է մսխել, Պարիզում նրանց թողածը կը լինի 500 միլլիոն ֆրանկ:

Օտարներ եղած են թւով մի միլլիոն ու կէս (1.500.000): Ամեն մէկը միջին հաշւով 500 ֆրանկ մսխած լինի, ալդ կ'անէ 750 միլլիոն ֆրանկ:

Այդ օտարները այսպէս են բաժանւում.

Անգլիացի	380.000	հոգի:
Բելգիացի	225.000	—
Գերմանացի	160.000	—
Ամերիկացի՝ հիւսիսից	90.000	—
Ամերիկացի՝ հարաւից	25.000	—
Իսպանիացի	56.000	—
Ջւիցերիացի	52.000	—
Իտալացի	38.000	—
Աւստրիացի—Ունգարացի	32.000	—
Ռուսիացի	7.000	—
Թոյն		
Ռումանացի }	5.000	—
Թուրք		
Պորտուգալացի	3.500	—
Աֆրիկացի (մեծ մասով Ալժիրիալից)	12.000	—

Ասիայի աղղութիւններ 8.250 հոգի:
Աւստրալիայից, Նաւալից և այլն. . . 3.000 —

Պարիզի երկու ամենամեծ հիւրանոցները՝ Grand Hôtel (Գրանդ-Օտել) և Hôtel Continental (Օտել-Կոնտինանտալ) ընդունել են ամեն մէկը 75—80.000 հոգի:

Աշխարհահանդէսը վճարած ալցելուներէ թիւը, սկսած 5 մալիսից (սկիզբը) մինչ 5 նոյեմբերի (վերջին օրը), եղած է 25.028.254, որոնց վերայ պէտք է աւելացնել երէկաւ 400.000-ը, ընդամենը ուրեմն մօտ $25\frac{1}{2}$ միլիօն: Զրի տոմսակներ տրւած էին էքսպօզիցիոններին, ժուրնալիստներին, բնասօրաններէ ծառաներին 28—30.000: Եթէ ընդունենք, որ դոցանից 25.000 հոգի ամեն օր ներս ու դուրս էին անում, կը ստանանք վեց ամուսն համար 4 միլիօն: Վճարող և ձրի ալցելուներէ թիւը, ուրեմն, եղած է մօտ $29\frac{1}{2}$ միլիօն:

Աշխարհահանդիսի փակման առիթով Ֆրանսիա Մալնար Նւիրում է «Ֆիգարօ» թերթում հետեւեալ խորհրդածութիւնը.

«Էլլ» մի երկու ժամ, և մեծ հրախաղութիւնը վերջացաւ: Այդ, անկասկած, մի անշալի մեծ լաջողութիւն էր: Եւ ես խօսում եմ Աշխարհահանդիսի ոչ միայն աչք չլացնող իրերի վերայ, որովհետեւ բացի դոցանից կար ուսանելի և հետաքրքրական իրերի մեծ քանակութիւն: Ազատ արւեստների (արդիւնագործութեան) գալլերէլը բոլոր միւսներից առաջ ներկայացնում էր հրաշալիքների և տեղեկութիւնների, իւր տեսակով, միակ միադումարում, որ ոչ մի այլ տեղ գտնել չի կարելի: Սակալն և ալնպէս բոլորը լաջողած էր, բացի միայն ճաշարաններից, ուր չափազանց փոքրիկ սեղանների վերայ վատ էր ուտում, սպասաւորած ծառաներով, որոնք իրանց ժամանակաւոր կարեւորութիւնով չափից դուրս երևակաւում էին: Զարմանալի շատ նեղածք լինելը, որը սիբարիտներին և քնքույ մեծացածներին վիրաւորում էր, լաջողութեան մի նոր ապացոյց էր: Սկզբում դորա վերայ խոփու դէմք ցուց տւին, բայց այդ երեխայականութիւնը ձեռքից թողին՝ լաւ տրամադրութեան հոսանքին հետեւելու համար, որը վեց ամսից դէս Պարիզը ամեն ինչ իւր հետ տարաւ, իւր մէջ պարածել տալով բուրլիները ամբողջ Նւրոպալից:

«Այժմ, երբ այդ ամենը դադարում է, սկսւելու են զանգատները և ջիգրած մարդիկ հարցնելու են, թէ այդ ամենը ի՞նչ օգնեց: Ի հարկէ, շատ լաւ կը լինէր, եթէ Աշխարհահանդէսը կարողացած լինէր միջազգային աւտելութիւնը և ոխը անհետացնել և ներքին երկպառակութիւնները հանդարտացնել: Ափսո՛ս, որ այդ անկարելի եղաւ: Արդէն մի միւլթարութիւն կը լինէր իմանալ, որ հանդիսի ալցելուները իրանց հետ մեծ գումարներ բերին Ֆրանսիա և ալստեղ թողին: Բայց այդ լուի նիւթական հետեանքից վեր բան ձեռք բերւեց: Մենք ապացուցեցինք Նւրոպալին,

որ մենք աւելի լաւ ենք, քան ինչ մենք ինքներս ենք ասում, աւելի լաւ, քան ինչ մարդ կը կարծէր, կարողալով մեր լրագիրները և լսելով մեր ճառերը:

«Եւ իսկապէս, ով չօղածները և ճառերը բառ առ բառ է ընդունում, պէտք է մեզ սրիկաների և խառնակիչների տեղ ընդունէր: Բայց աչքից անցնելը այն բալտի, ինչ մենք իրագործել ենք, համաշխարհային հանգիսի բոլոր հրաշալիքները տեսնելը պէտք է փոխէր այն կարծիքը, որ մեր մասին տարածւած է: Այդ պատճառով հէնց մեզ աւելի չեն սիրելու Եւրոպայում. ես կարծում եմ անգամ, որ մեզ մի փոքր էլ աւելի են նախանձելու.— և մեր ազգային ինքնաճանաչութեան համար դա միեւնոյնը չէ— ալթմ ալ ես անկարելի է, այս վեցամսեալ փառաբանութիւնից լետով, Ֆրանսիան ընդունել անկման մէջ ընկղմւած երկրի տեղ, որը քաղաքականութիւնով անդունդն է գլորում (!) և լեղափոխութիւնով կրծոտում: Դեմագոգիայի ծաւալելը անշուշտ մեզ վերաջ կալցրել է մի քանի պակասութիւններ, բայց մենք անկասկած պահպանել ենք այն լատիւլութիւնները, որոնք մեր գեղարւեստին և մեր արդիւնագործութեան տալիս են մի փալուն գերադանդութիւն: Այնտեղ, ուր հնարը նորանումն է, որ շուտով շինւի և էփան ծախւի, ուրիշները կարող են մեզ գերադանցել: Բայց մենք մնում ենք վարպետներ խորիմաստ հնարագիտութեան և աշխատանքի ծալքագուն կատարելութեան».

Վ Ի Լ Հ Ե Լ Մ Կ Ա Ց Ս Ր Ը Կ. Պ Օ Լ Ս Ո Ւ Մ

Կ. Պօլիս, 2 նոյեմբերի:

Որպէս լատին է, լուծաց թագաժառանգը պսակեց գերմանացոց ալթման կալսր Վիլհելմ II-ի քրոջ՝ իշխանուհի Սօֆիայի հետ, որը դուստրն է Ֆրիդրիխ կալսեր, որի վշատակը, չը նալած նորա կարճ թագաւորութեան, անմոռաց կը մնալ ղեռ ևս շատ տարիներ: Հարսանիքի տօնախմբութիւնը կատարեց մեծ չքեղութեամբ, և դորա համար լատկապէս եկած էին Աթէնք նորահարսի մալըր, գերմանացոց կալսր Վիլհելմ II-ը և շատ իշխաններ, որոնց թուում և ուստաց թագաժառանգ Յեոարեիչը:

Բայց այն, ինչ այդ ճանապարհորդութեանը առանձին նշանակութիւն պիտի տար, պէտք է լինէր Վիլհելմ II-ի ալցելութիւնը թիւրքաց սուլթանին, Կ. Պօլսում: Գերմանացոց կալսրը, դահր բարձրանալու ժամանակից դէս, որ ընդ ամենը տարի ու կէս է, անձամբ ալցելեց Եւրոպայի գրեթէ բոլոր նշանաւոր միապետներին, սկսելով ռուսաց թագաւոր Կալսրից: Ապա նա ալցելեց Շւեդիա, Դանիա, Աւստրիա, Իտալիա, Անգլիա և ալթմ Յունաստան և ի վերջո՛ւ թիւրքիայի մալքադալք Կ. Պօլիս:

Այս մէկ բանում ամենքը համաձայն են, որ գերմանացոց կայսեր ացելութիւնները բուն քաղաքական բնաւորութիւն են կրում. ամեն տեղ նա որոնում է կամ տարածաշուկաները հեռացնել և կամ ուղղակի միութեան դաշնակցութիւններ կապել:

Նոյն քաղաքական և ոչ տուրիստի հետաքրքրութեան համար նա արժամ գալիս է թիւրքաց մարտաքաղաքը, որին արեւմտեան սակաւ է վիճակւած օտար միապետներին իւր մօտ ընդունել: Որքան եւս լիշում եւմ, մինչև արժամ սուլթաններին հիւր եղած են միապետներին՝ միայն Աւստրո-Ունգարիայի արժման կալսր Ֆրանց-Յովսէփը, 1869 թականին, և դորանից առաջ, Ֆրանսիացոց կայսրուհի Նեոպոլէոն III-ի ամենակարողութեան ժամանակ: Վիհնիա II-ը, ուրիմն, երկրորդ միապետն է, որ սուլթաններին պալատը ոտք է կոխում:

Ընդունելութիւնը եղաւ շատ փառաւոր, արեւմտեան, որպէս երբեք մի պոլսեցի տեսած չէ իւր կեանքում: Եւ իրօք, «Հաղար ու մի գիշեր»-ի հէքիթական տեսարանները պոլսի իրանց բոլոր շրջանող փալլով և գոյների խաղերով դառան իրականութիւն. սորանից աւելի փալլուն և մեծաշուք ընդունելութիւն չի կարելի երեակալել: Ամենավառ երեակալութիւնով անգամ անկարելի էր ներկայացնել արեւմտականութիւնը, որը Օսմանեան կայսրութեան մարտաքաղաքը ներկայացնում էր ապա դէպքի առիթով: Գերմանական ընկերութիւնը (Verein) սարգել էր մի մեծաշուք ացելութեան գնացք, որի համար Լյուդի նաւերից երկուսը վարձած էին, մինչդեռ երրորդ մեծ շոգենաւը լքուած էր գերմանացի աշակերտներով, որոնք իրանց կայսեր պէտք է բարձրագոյն ուսանելով ողջունէին: Բացի արդ, մի թիւրքաց շոգենաւ և բազմաթիւ մասնաւոր նաւեր գնացին գերմանական նաւատորմին հանդիպելու Մարմարալ ծովում, իսկ Ոսկեղջիւրից դէպի Գոլմա-բաղէ հարիւրաւոր մանր նաւակներ խրտում էին: Մենք հանդիպեցինք գերմանական նաւատորմին գրեթէ Սան-Ստեֆանօ-ի մօտ, ուր կապեց, 12 տարի առաջ, լատինի ուսուցիչութեան խաղաղութեան դաշնը: Սկզբում գալիս էր «Լօրեյալ» շոգենաւը, լետոյ «Կալսը», որի մէջ՝ կալմի վերալից ծածանում էր ոսկէ-դեղին կապերական դրօշակը: Նրան հետևում էին «Հոհենցոլերն», որ ճանաչւում էր կայսրուհու դրօշակով, թիւրքաց եախոր «Սուլթանիէ», որ իւր վերալ էր տանում ամենաբարձր աստիճանաւորներին, որոնք գերմանական նաւատորմին Դարդանելի մօտ սպասում էին: Լետոյ գալիս էր մի թիւրքաց զրահակիր պատերազմական նաւ «Իդդեդին», որի վերալ թիւրքաց մարշալը ընդ առաջ էր գնացել կայսեր մինչ Յոնաստանի Պիրէ նաւահանգիստը: Դա մի ցոյց էր տոնելի: «Իդդեդինը» արեւմտեան է, որը 1865-ին, երբ կրետացիների ապստամբութիւնը պաշտպանւում էր դեռ ևս «Արկադիա» լուծական նաւով, Կրետէի առաջն երևեց, «Արկադիակին» դէն ղցեց, և արեւմտեան մի հարևանով ապստամբութեանը վերջ դրեց: արդ «Արկադիան» ցալմ էլ ընկած է

Կ. Պօլսում: Հասկանալի է, թէ ի՞նչ խառն զգացումներով տեսան լոյները նոյն «Իզդեղին» նաւը իրանց ջրերում:

Ծովում, գերմանական նաւատորմին հանդիպելիս, ընդ առաջ դնացող գերմանացիք հնչեցրին գերմանական ազգային հիմնը, որին լաջորդեց «Հռենոսի պահնորդը» (Die Wacht am Rhein), մինչդեռ խլացուցիչ ուռաները օդը թնդացրին և կայսրը Գօլց փաշայի հետ կօմանդօրի կամուրջի վերայ երևեց: Եւ վերջ չը կար խնդութեան ձայներին, մանաւանդ աշակերտների կողմից: Արեգակը սկսեց փալել, ճեղքելով ամպերի խաւերը և իւր բոլոր խաբարդէտ գոյներով երևաց Ստամբուլը. սկզբում դա մի պատ էր ցցւած ծովի մէջ և ցիւնկով վերը ծածկւած. դորա չետեից սկսում են, բլուրի վերայ մեղմ բարձրանալով, պարտէզներ և տներ, պալատներ և մզկիթներ. դոցա միջից դուրս է պրծնում հռչակաւոր Ալա-Սօֆիա, որը այս քաղաքի և կալսերութեան, կարելի է ասել, քարացած ժամանակագրութիւնն է՝ սկսած հազար հինգ հարիւր տարիներից: Եւ նորա մօտից դէպի Ոսկեղջիւրը, դէպի հին Սէրապք իւր սքանչելի կամարակալ ծառերի մացառուածքով, որի վրայից բարձրանում են երկար սև նոճիները և որից երևում են, հազւագիւտ նկարչական անկարգ դասաւորութեան մէջ, կիսածածկ սպիտակ զարճադղեակները և կեօշկերը (պալատ): Յետոյ՝ Ոսկեղջիւրը, այս ծովը, որ ամբողջ քաղաքը ակիքներով ծփում է, և նորա նաւահանգիստն է կազմում, իւր նաւերի խուլ աղմուկով, աջնտեղ՝ Գալաթա իւր զօրեղ աշտարակով, որի վրայից երկու ծովերի և երկու ցամաքների ամենադիւթական տեսարանն է երևում. աւելի հեռու, Բօսֆօրի վերայ, Դօլմա-բաղչէն քաղաքամասնը, «ալսպէս կոչւած» երկար ձգւած, փալլուն՝ սպիտակ և հէքիաթական զղեակի անունով, որը ուղղակի մեր առջև չողողող ակիքներից դուրս է բարձրանում, պատած սոււերախիտ պարտէզներով, որոնց չետեում ծածկւած է Իլդիզ-Կեօշքը, ալն պալատը, ուր պիտի վալը իջնէ գերմանացոց կալսերական զուգը: Ամբողջ Բօսֆօրը կենդանացած է փոքրիկ նաւակներով, որոնք պատել են գերմանական պատերազմական նաւերի շուրջը, մինչդեռ բլուրների վերայ, որտեղից կարելի է տեսնել Դօլմա-բաղչէն, բոլոր ազատ տեղերը բռնւած են ամեն դասակարգի իրար խոնւած տաճիկներով և նոյն իսկ հարմը այսօր դատարկ է, որովհետեւ բոլոր կանաչ կտուրներն են բարձրացել՝ հզօր միապետի և նորա ամուսնու գալուստին ականատես լինելու համար:

Մեր «կայսր» պատերազմական նաւը ժամը 11³/₄-ին Ալա-Սօֆիայի մօտով անցաւ, Դօլմա-բաղչէի մօտ կանգ առած թիւրքաց պատերազմական նաւերից որոտաց առաջին ողջուցի ումբաձգութիւնը. «կայսրը» չետ ողջունեց, և իսկոյն դորանից չետոյ Ոսկեղջիւրի հին պարխապի մօտ շարւած ումբերը սկսեցին իրանց որոտընդոստ կոնցերտը, որի ձայների տակ գերմանական պատերազմական նաւատորմը կամաց-կամաց առաջ դնաց:

Ծովափից 500 մետր հեռու, կալսերական երկու նաւերը խարխախ գցեցին. չուտով դորանից լետով «կալսրի» վերայ փողփողաց կալսերական դեղին դրօշակը, Վիլհելմ II-ը նստեց մի նաւակ և բաղմամբոխ ժողովրդի ողջուններով ուղեկցեալ, առաջ գնաց դէպի «Հոհենցոլլերն», որ ալտեղից արդէն կալսրուհու հետ ցամաքը իջնէ, Սուլթանը ալդ միջոցին երեւց կարմիր մահուդով փռած սանդուղքի վերը, որը պալատից տանում է Բօսֆօրը և ինքը հրաման տւեց, որ չափազանց իրար խռնած նաւերը հեռանան: Կալսերական զոգը իջաւ ցամաք և կատարեց նորա և Սուլթանի փոխադարձ բարեկը:

Առաջին հանդէսը, որ կատարեց Վիլհելմ II-ի համար, զօրախաղն էր լատուկ դորա համար չինած մի պաւլիօնի առջև, սքանչելի տեսարանով Բօսֆօրի, քաղաքի և Պրօպոնդիսի վերայ, Իլդիզ-կիօջքի օդանցուկ բարձրութիւնների վերայ: Առաջ էին բերւած 15 բատալիօն ինֆանտերիա (կանոնաւոր զօրք, զուսներ և նեղրներ), 4 րեգեմենտ հեծաւազօր և 4 բատարէա ումբաձիգ զօրք (արտիլլերիա): Ժամ ու կէս տեւց կալսրի մօտից անցները: Կալսրը մի քանի անգամ արտապալտեց իւր հիւսցմունքը զօրքերի պատերազմական տեսքի վերայ: Ամենից շատ լաւ ցուց տւին իրանց երկու նեղր-բատալիօններ, կանաչ տուրքանով (գլխածածկ), կապուտ պինջակներով, կարմիր լալն ծուճկ-վարտիքներով և սպիտակ կամաչներով, որպէս նաև երկու բօսնէական վաշտերը (կօմպանի) իրանց ազգալին զգեստներով, ծովալին բատալիօնը և երկու ուլան-շաղրօններ, մի բաժանմունք հրդեհաշէջ գնդի:

Երեկոյեան տրւեց հանդիսաւոր ճաշ, որին կանչւած էին 120 հիւր: Սեղանը կաղմած էր երկու պալտանման իրար դէմ դրած բաժանմունքներից: Առաջնի մէջտեղում տեղ գրաւեց սուլթանը, նորանից աջ՝ կալսրուհին, ձախ՝ կալսր Վիլհելմ II, կալսրուհու կշտին՝ պրինց Հէնրիխ (կալսեր եղբարը): Երկրորդ բաժանմունքում նախադահում էր մեծ-վիզիրը, որի կողքին՝ դուքս Մեկլեմբուրգ-Շրերին, նախկին մեծ-վիզիր Սախդ փաշա, Նդհեմ փաշա, աւստրիական դեսպանը իւր ամուսնով, գերմանացոց դեսպանը իւր ամուսնով և աղջիկներով, և միւս դեսպանները: Մնացած տեղերը բռնած էին մինիստրները, թիւրքաց ծառայութեան մէջ գտնուող գերմանացի ծառայողները, պատերազմական նաւերի հրամայողները և գերմանական դեսպանութեան պերսօնալը: Սուլթանը անձամբ տարաւ կալսրուհուն սեղանի մօտ և խօսակցում էր իւր հիւրերի հետ միջնորդութեամբ ցերեմոնիապետ Մուհիւր փաշայի: Մանաւանդ կենդանի էր խօսակցութիւնը կալսեր հետ: Ճաշից լետով սուլթանը տարաւ կալսերական զոգը և պրինց Հէնրիխին մի կողմնակի դահլիճ, ուր խօսակցութիւնը շարունակեց մինչ ժամը 10-ը: Նկատուեց, որ կալսրը մանաւանդ քաղցր էր Փը-

րանսիական ղեսպան Մոնտեբելլո'ի հետ, որին չափենց իւր մեծ գոհու-
նակութիւնը Կ. Պօլսում արած ընդունելութեան համար:

Երկրորդ օրը կ'սկսէր Նւիրեց գերմանական գաղթականութեան. այցելու-
թիւն արեց գերմանական եկեղեցուն և հիւանդանոցին: Բողոքական եկեղեցին
գտանում է Պերալում, Ալնալի Թիեսմէ թաղում: Ալնանդ տանող փողոցը,
որ խղճով դրութեան մէջ էր, առաջուց մաքրւեց և շինւեց, այնպէս որ
կառքով կարելի լինի անցնել. տները մասամբ միայն դրօշակներով զար-
դարւեցին. Պերալի գլխաւոր փողոցը փակւեց՝ դժբաղդութիւնների
դէմն առնելու համար: Ճիշդ ժամը 11-ին կալսերական զուգը իւր սւիտա-
լով եկաւ եկեղեցի, ուր նա բռնեց տեղ ղեսպանական օթեակում: Այդ
օրը, 2 նոյեմբերի (նոր ստիլով), բողոքական ընդունացիակի տօնն էր:
Քարոզիչը խօսեց աւետարանի գլ. 13, 8 բնագրի վերապ. Յար-
մար համարեց քարոզիչը վերապիշել Պօլսո առաքեալի ճանապարհ-
որդութիւնը Տրօա, Մակեդոնիա և Աթէնք, և նոյն իսկ վերակենդա-
նացրեց Յովհաննէս Ոսկեբերանի ուրականը:

Պատարագից լետոյ կալսերական զուգը ուղևորւեց ղեսպանատունը,
Նախաճաշից լետոյ գերմանական գաղթականութեան մի պատգամաւորու-
թիւն ներկայացրեց մի ուղերձ: Կալսրուհին գնաց գերմանական հիւան-
դանոցը, որը 44 տարւալ հիմնւած հաստատութիւն է, և որը, համեստ
հանգամանքներից դուրս գալով, այսօր դառել է մի օրինակելի հաստատու-
թիւն բոլոր աղքերի համար, շնորհիւ անձէր գործունէութեան երէցկին
Կալքերովերթի: Կանանց ընկերութիւնը ներկայացրեց մի գործւած վարա-
գույր: Կալսրուհին իւր անունը գրեց ալբօնի մէջ, աւելցնելով օրւալ բնա-
բանը, որ քարոզի հիմքն էր կազմել:

Երրորդ օրւալ մի մասը անցկացրին հիւրերը այցելելով Կ. Պօլսի
գլխաւոր կէտերը՝ բազարը, հին-սերալը, Ալա-Սօֆիան, պարիսպները,
մուղէլը (թանգարան), ուր պահւած է Ալեքսանդր Մեծի (Մակեդոնացու)
հրաշալի դագաղը: Կալսրը սուլթանի տւած սպիտակ ձիու վերալ էր, ո-
րին ուղեկցում է չօքէ և Ֆօն դեր Գօլց փաշաները: Կալսրուհին՝ ու-
ղեկցութեամբ հալադգի Արթին փաշայի երկու աղջիկների և Ֆօն չօքէ փաշայի
կնոջ՝ այցելեց նաև Սուլթանի հարեմը, ուր նա սուլթանի երկու աղջիկներին
գրկեց և նոցա երաժշտութիւնը լսեց: Ճաշից լետոյ կալսերական զուգը
գնացին դէպի Սև ծովը, վերադարձան լուսնեակ երեկոյեան, Բօսֆօրի ճրա-
գալուցի միջով: Լաւ լուսաւորւած էր նաև Պերալի գլխաւոր փողոցը: Նա-
ւալին մարդկանց համար սուլթանը ուղարկել էր ամեն տեսակ մթերք:
Երեկոյեան եղաւ սուլթանի մօտ վերջին հանդիսաւոր ճաշը: Հետեանալ չոր-
րորդ օրը կ'սկսէր այցելից Ասիակի ափում գտնուող Հալլար-փաշայի կա-
լարանը, որ շինում են գերմանացիները և որը պէտք է ճանապարհ բացէ
Անատոլիակի մէջ:

Ասիայի կողմում հալոց հոգևորականութիւնը առիթ գտաւ ողջունելու
կալսրին, քանի որ հալոց Պատրիարքի խնդիրը Բ. Դուան՝ կալսրին ներ-
կայանալու թուլտուութիւնը ուզելու, առանց հետևանքի մնաց, պատասխան
ստանալով, որ ծրագրում ալդ չէր նախատեսուած: